ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևին (նկարին) համապատասխան: Կիսաշրջազգեստ (Ձև 7): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բնական մետաքսե աստառով (8-C5-ԲՇ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), երկարությունը մինչև ծնկները, ունի երկկողմանի սեղմոններ, գոտին՝ գոտեմակօղերով, հետնամասում 15 սմ երկարությամբ փակ բացվածքով, գոտու վրա կարվում է 8 կամրջակ: Կիսաշրջազգեստը հետևի մասում կոճկվում է մեկ կոճակով և ծածկված է կայծակնաճարմանդով: Կիսաշրջազգեստները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը: Նախքան կիսաշրջազգեստների պատրաստումը կիսաշրջազգեստների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Կիսաշրջազգեստների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև կիսաշրջազգեստների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ

	հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	-